# Մեծ ակնկալիքներ

Նոյեմբերի 17, 2021

Երեկոյան ժամը 6:00-7:00

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան

Անցում դեպի
Անցումային Մանկապարտեզ (TK)
և Մանկապարտեզ



# Բարի գալուստ

Ադրիանա Լատրովալիս,
Հատուկ ուսուցման բաժնի կազմակերպիչ



# Անցումային գնահատման գործընթաց
## Էնջի Մայքլապոլոս, Վաղ միջամտության մասնագետ

- Ուղարկել գնահատման ծրագիրը:
- Յուրաքանչյուր աշակերտ վերագնահատվում է կասկածելի հաշմանդամության բոլոր ոլորտներում:
- Մշակվում է նոր IEP ծրագիր և մինչև գարնանային արձակուրդները դրա անցումային հանդիպումն է կատարվում նախակրթարանի թիմի հետ:
- **Շատ կարևոր է ծնողի կարծիքը:**
- Տարրական բոլոր դպրոցները մանկապարտեզի ընդհանուր կրթական ծրագրի ծանոթացում են կազմակերպում:
- Յուրաքանչյուր դպրոցում «Համագործակցային ուսուցման կենտրոնների» (CLC) ԱՄ և մանկապարտեզի հատուկ ուսուցման դասարանների էքսկուրսիաներ են կազմակերպվում ծնողների համար:
- Խրախուսում ենք ծնողներին ներկա գտնվել տարրական դպրոցների բաց դռների օրվա միջոցառումներին:



**Մասնագիտացված կրթական դասավանդում (SAI)/Հարակից ծառայություններ**
Կարին Տոմեր, տարրական դպրոցի ծրագրի մասնագետ

- Մասնագիտացված կրթական դասավանդումը (SAI) հատուկ մշակված ծրագիր է՝ հաշմանդամություն ունեցող իրավասու աշակերտների եզակի կրթական կարիքները բավարարելու համար:

- SAI-ն, համապատասխան աջակցությամբ և ծառայություններով, որոշ մակարդակով հասանելի է շրջանի բոլոր դպրոցներում: Որոշ դպրոցներ դասասենյակներ ունեն յուրահատուկ կարիքներ ունեցող աշակերտների համար:

- Բոլոր դպրոցներում աշխատում են թեթևից մինչև միջին աստիճանի հավատարմագրված կրթության մասնագետներ: ***Ռեսուրսների աջակցության ծրագիր (RSP)***

- Փոքր խմբերի դասասենյակները (Ցերեկային հատուկ դասարաններ կամ SDC) գործում են **<u>ՄՄքՔինլի , Ռուզվելտ, Էմերսոն և Պրովիդենսիա</u>** տարրական դպրոցներում, որոնք դասավանդվում են կրթության մասնագետի կողմից և ճանաչվում են նաև որպես ***«Համագործակցային ուսուցման կենտրոններ» (CLC)*** անունով:



## Մասնագիտացված կրթական դասավանդում (SAI)/Հարակից ծառայություններ (շարունակություն)

Կարին Տոմեր, տարրական դպրոցի ծրագրի մասնագետ

- Ցերեկային հատուկ դասարանը գործում է <u>**Ստեվենսոն տարրական դպրոցում**</u>, որը դասավանդվում է չափավորից մինչև ծանր հավատարմագրված կրթության մասնագետների կողմից:
- Ցերեկային հատուկ դասարանը գործում է <u>**Միլլեր տարրական դպրոցում**</u>, որը լրացուցիչ աջակցություն է հատկացնում վարքագծային կամ սոցիալ-հուզական խնդիրներ ունեցող հատուկ ուսուցման ծրագրի երեխաների համար:
- Ցերեկային հատուկ դասարանը գործում է <u>**Վաշինգտոն և Հարթ տարրական դպրոցներում**</u>՝ լեզվական աջակցությամբ ուսուցիչներով, որոնք մասնագիտացված են աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող աշակերտների եզակի կարիքները բավարարելու համար:
- Ֆութհիլ հատուկ ուսուցման տեղական ծրագրի տարածք (SELPA): <u>**Քոլեջ Վյուն**</u> ծառայություններ է մատուցում Գլենդելի, Բրբենքի և Լա Քանադայի աշակերտներին, դասավանդելով ֆունկցիոնալ կրթական հմտություններ, կյանքի հմտություններ, հաղորդակցում, շփում և շարժիչ հմտություններ:
- Բոլոր դպրոցները լրացուցիչ հարակից ծառայություններ են հատկացնում աշակերտներին ըստ նրանց IEP ծրագրի:
- Այս ծառայությունների որոշ օրինակներ (ոչ սպառիչ) ներառում են.
    - Լեզվի և արտաբերման (լոգոպեդի) ծառայություններ
    - Հարմարեցված ֆիզկուլտուրա
    - Մասնագիտացված թերապիա



# Դպրոցներ

Բացի բոլոր տարրական դպրոցներում գործող ընդհանուր ուսուցման և ռեսուրսներ ծրագրերի, ներքոհիշյալ դպրոցներում է գործում հատուկ կրթական դասավանդման ծրագիրը (SAI) և հատուկ ցերեկային դասընթացները (SDC):

| | |
|---|---|
| **Բրետ Հարթ** | SDC դասարան աուտիզմով (ASD) տառապող երեխաների համար: |
| **Վաշինգտոն** | SDC դասարան աուտիզմով (ASD) տառապող երեխաների համար: |
| **Միլլեր** | SDC դասարան վարքագծի դժվարություններ ունեցող երեխաների համար: |
| **Պրովիդենսիա** | SDC դասարան թեթևից չափավոր աջակցության կարիք ունեցող աշակերտների համար: |
| **Էմերսոն** | SDC դասարան թեթևից չափավոր աջակցության կարիք ունեցող աշակերտների համար: |
| **Ռուզվելտ** | SDC դասարան թեթևից չափավոր աջակցության կարիք ունեցող աշակերտների համար: |
| **ՄքՔինլի** | SDC դասարան թեթևից չափավոր աջակցության կարիք ունեցող աշակերտների համար: |
| **Ստիվենսոն** | SDC դասարան մտավոր հաշմանդամություն ունեցող աշակերտների համար (միջինից ծանր աջակցություն): |



# Ընդհանուր ուսուցում ստացող աշակերտներ

Ռոշել Շիփստադ և Ալիսոն Մարտինեզ
Ընդհանուր ուսուցման ուսուցիչներ

- Սպասելիքներ
- Աջակցություն
- Հասնել ընդհանուր հիմնական չափանիշներին
- Աշխատանքի/նախագծերի տեսակներ



# Ռեսուրսների աջակցության ծրագիր (RSP) **ընդհանուր ուսուցման համար**

Ջիլ Ջոնսոն և Մարթա Վալտեր,
տարրական դպրոցների տնօրեններ

<u>Տարրական բոլոր դպրոցները</u>

- Հարակից ծառայություններ ըստ IEP ծրագրի
- Դասարանից ներս ու դուրս ծառայություններ
- Տևողությունը սահմանվում է ըստ անհատական կարիքների
- RSP ժամը կազմում է դպրոցական օրվա 50%-ից ավելի քիչ
- RSP ուսուցիչներները համագործակցում են ընդհանուր ուսուցման ուսուցիչների հետ
- Կոնսուլտացիոն ծառայություններ
- Աջակցում են աշակերտի կրթական կատարողականությանն ու ուսումնական ծրագրի հասանելիությանը



# Թեթևից չափավոր աջակցություն պահանջող երեխաներ

## Կարին Տոմեր, տարրական դպրոցի ծրագրի մասնագետ

<u>ՄքՔինլի, Ռուզվելտ, Էմերսոն և Պրովիդենսիա տարրական դպրոցներ</u>

- Համընդհանուր հիմնական չափանիշների համապատասխանություն դասարանի մակարդակի ուսումնական ծրագրի և լրացուցիչ ուսումնական ծրագրի հետ
- Սոցիալական հմտություններ - ուղղակի ուսուցման և ամենօրյա ներկառուցված միջոցառումների ընթացքում
- Դրական վարքի առօրյա ամրապնդում
- Դասեր ընդհանուր ուսումնական դասարանի հասակակիցների հետ (օրինակ՝ ֆիզկուլտուրա, երաժշտություն, գրադարանի ժամ)



# Ցերեկային հատուկ դասարան աուտիզմի հետ կապված աջակցության կարիք ունեցող երեխաների համար

Ադրիանա Լատրովալիս, Հատուկ ուսուցման բաժնի կազմակերպիչ

## Վաշինգտոն և Բրետ Հարթ տարրական դպրոցներ

- Բնորոշ օր
- Մանկապարտեզի հիմնական հտությունների բարձր ակնկալիքներ
- Շեշտը դրվում է իմաստալից հաղորդակցման հմտությունների վրա
- Սոցիալական հմտությունների ուղղակի ուսուցում իրական միջավայրում
- Դասեր ընդհանուր ուսուցման ծրագրի իրենց հասակակիցների հետ



# Տեսողական աջակցություններ


















# Զգայական աջակցություն












# Չափավորից ծանր աջակցություն ունեցող աշակերտներ

Մալի Հիսլոփ, Հատուկ ուսուցման ուսուցիչ

<u>Ստիվենսոն տարրական դպրոց</u>

- Ուսուցանել ամբողջական երեխային

- Դասասենյակի օրինակ
  - Համագործակցական բազմամասնագիտական թիմ
  - Ֆունկցիոնալ հաղորդակցման և սոցիալական հմտությունների անմիջական ուսուցում
  - Դասեր ընդհանուր ուսուցման ծրագրի իրենց հասակակիցների հետ
- Ուսուցման համակարգի եզակի ուսումնական ծրագիր
  - Ֆունկցիոնալ դասեր և կյանքի հմտություններ



# Քայլաքարեր

## Ուսուցանել ամբողջական երեխային

| | |
|---|---|
|  | **Ճանաչողական**<br>Յուրաքանչյուր աշակերտի կրթական ծրագրի ձևավորումը սկսվում է նրանց յուրահատուկ զարգացման մակարդակի և ուսուցման արագության ըմբռնմամբ: «Ուսուցման եզակի համակարգ»-ը լայնորեն իրականացվող այլընտրանքային ուսումնական ծրագիր է: Շեշտը դրվում է սովորելու հնարավորություններ ստեղծելու և ուսումնական ծրագրի հասանելիության վրա՝ յուրաքանչյուր երեխայի համար մշակված փոփոխություններով և հարմարություններով: Յուրաքանչյուր աշակերտի քաջալերվում է ամբողջովին զարգացնել իր հմտությունները և ստեղծագործ միտքն անվտանգ և աջակցող դասարանական միջավայրում՝ պահպանելով բարձր չափանիշներ, ինչպես նաև շարունակաբար մարտահրավեր նետելով յուրաքանչյուրին: |
|  | **Զգացմունքային**<br>Ծրագում ներկառուցված է հուզական իրազեկության և մտքի զարգացումը: Աշակերտներին սովորեցնում են բացահայտել իրենց զգացմունքները և արտահայտել «Ընդհանուր հաղորդակցման մոտեցում» ծրագրի միջոցով (ժեստեր, նշաններ, բանավոր կերպ, նկարներով հաղորդակցում, համերյալ-այլընտրանքային հաղորդակցություն): Ցուցադրվում և ուսուցանվում են զգացմունքներն արտահայտելու և հաղթահարելու համապատասխան մեթոդները: Վարքի դրական մեթոդները և միջամտությունները հետևողականորեն կիրառվում են դպրոցական օրվա ընթացքում՝ քաջալերելով աշակերտներին այնպես արտահայտել իրենց զգացմունքները, որ լավագույնս բավարարի իրենց կարիքները: |
|  | **Ֆիզիկական**<br>Հաշվի են առնվում յուրաքանչյուր երեխայի յուրահատուկ ֆիզիկական կարիքներն ու ուժերը: Բոլոր աշակերտների առողջության և անվտանգության պահպանումը առաջնահերթ խնդիր է, որտեղից սկսվում է մարմնի գիտակցության, նուրբ և կոպիտ շարժիչ հմտությունների զարգացումը: Մասնագիտական թերապիան, ֆիզիկական թերապիան և հարմարեցված ֆիզկուլտուրան, ըստ անհրաժեշտության, ներառված են և այս թիմերի մասնագետները սերտ կապի մեջ են մտնում դասարանի աշխատակազմի հետ՝ բոլոր աշակերտներին ծառայող լավագույն ծրագրերն ու նպատակները ստեղծելու համար: |
|  | **Սոցիալական**<br>Աշխատակազմն առողջ, դրական, աջակցող հարաբերություններ է ստեղծում յուրաքանչյուր երեխայի հետ՝ հիմք տրամադրելով ավելի դժվար աշխատանքի համար, որը կապված է ընկերների հետ ավելի առողջ հարաբերություններ ստեղծելու և պահպանելու հետ: Ծրագրում ներդրված են սոցիալական հմտությունները դիտարկելու և կիրառելու հնարավորություններ: Աշակերտները մասնակցում են համագործակցական խաղերի, ամեն ինչ անում հերթով կամ կիսվելով, ինչպես նաև զարգացնում լեզվական հմտություններ օգտվելով «Ընդհանուր հաղորդակցման մոտեցում» ծրագրից (ժեստեր, նշաններ, բանավոր կերպ, նկարներով հաղորդակցում, համերյալ-այլընտրանքային հաղորդակցություն): Աշակերտները զարգացնում են խոսքը, կառուցում գործառնական հմտություններ և երևակայություն: Խոսքի թերապիան ներառված է ըստ անհրաժեշտության: Լոգոպեդն (SLP) աջակցում և համագործակցում է աշակերտների և աշխատակազմի հետ: Խաղն առաջնային միջամտությունն է, իսկ դասերը հարմարեցված են յուրաքանչյուր երեխայի համար: |



# Քայլաքարեր դասարանների տեսակները

| IEP նպատակները | Յուրահատուկ կրթության համակարգ | TEACCH/դասասենյակի կազմակերպում |
|---|---|---|
| • Համագործակցել Քայլաքարեր դասարանի թիմի հետ աշակերտների դասացուցակները կազմելու համար<br>• Համագործակցել Քայլաքարեր դասարանի թիմի հետ նպատակները մշակելու համար<br>• IEP նպատակի փաթեթ<br>• IEP նպատակի տուփ/փաթեթ<br>• Տվյալների հավաքագրում<br>• Պահպանել IEP փաթեթը<br>• Հետևել վարքի/սոցիալական հմտության նպատակներին | • Ամսական դասեր<br>• Անձնական փաթեթ<br>• Նոր ձեզ համար (եթե վերաբերվում է)<br>• Symbolstix-ը ինտեգրված դասարանում<br>• Տնային աշխատանք<br>• L3 Հմտությունների միջոցառումներ համակարչային ժամի համար | • Փաթեթներ<br>-կապ/հաղորդակցություն<br>-դիտում/վարք<br>-բժշկական<br>-փողարինողներ<br>-աշխատակազմ<br>-IEP<br>• Տեսողական դասացուցակ<br>• TEACCH տուփեր<br>• Կենտրոններ/դասավանդում փոքր խմբով<br>• Սոցիալական հմտություններ<br>• Ընդհանուր դասարան և հակառակը |



# ԱՄ (TK) և մանկապարտեզի արձանագրություն,

Մելինդա Դրեշլեր և Լոռեն Դիտեր

**Ուսանողական ծառայությունների բաժին**

- ԱՄ-ի (TK) և մանկապարտեզի տարիքային պահանջներ: IEP թիմը չի կարող որոշել ԱՄ-ի և մանկապարտեզի տեղավորումը:
- Ժամանակացույց
- Պահանջվող փաստաթղթեր
- Տեղեկատու հանդիպում

laurendieter@burbankusd.org



## Շնորհակալություն

Աղրիանա Լատրովալիս, Հատուկ ուսուցման բաժնի կազմակերպիչ

- ԱՄ (TK)/մանկապարտեզը դրական փորձություն է ձեր երեխայի համար:
- Ամառվա ընթացքում պատրաստվել երեխային մանկապարտեզ ընդունելու միջոցառումներ կազմակերպելու համար:
- Հետաքրքրվել, թե ինչպես մասնակցել և կամավոր աշխատել երեխայի տարրական դպրոցում:
- Բարձր սպասելիքներ ունեցեք ձեր երեխայի համար:
- Բրբենքն ունի ամենալավ ուսուցիչները: Ձեր երեխաները կլինեն լավ ձեռքերում:

